

Արմեն Յ. Մարուխյան
դասմ. գիտ. թեկնածու

ԵՐԻՏՅՈՒՐՔԵՐԻ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՊԱՏՄԱԽԻՐԱՎԱԿԱՆ ՀԵՏԵՎԱՆՔՆԵՐԸ.

Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչման համասեֆսում*

Երիտթուրքերի դատավարության մեղադրական եզրակացության և դատավճիռների մեջ պարունակվում են Օսմանյան կայսրության հայ բնակչության նկատմամբ իրականացրած զանգվածային կոտորածների այնպիսի մեղադրանքներ, որոնք համաձայն 1948թ. ՄԱԿ-ի «Ցեղապանության կանխարգելման և դրա համար պատժի մասին» կոնվենցիայի, միանշանակորեն որակվում են իբրև ցեղասպանություն: Ուստի տվյալ հարցը ներկայումս ոչ միայն պատմական, այլև իրավական ու քաղաքական նշանակություն ունի: Այն հանգամանքը, որ երիտթուրքերի հանցագործությունները քննարկվել են հենց թուրքական դատարանում, որը նրանց մեղավոր է ճանաչել նաև հայ բնակչության զանգվածային սպանությունների մեջ, վկայում է, որ տվյալ հանցագործությունը ժամանակին դատապարտել է ինքը՝ Թուրքիան, ճիշտ է, դա չորակելով իբրև ցեղասպանություն: Ավելին, այժմ Թուրքիան լիովին անտեսում է 1919-1920թթ. հենց թուրքական դատարաններում հայերի տեղահանությունների և կոտորածների մեղադրանքով կատարված դատավարությունների արդյունքները: Մինչդեռ, պատմության մեջ առաջին անգամ սեփական պետության բնակչության մի մասին ազգային հատկանիշի հիման վրա զանգվածաբար ոչնչացնելու համար նրա կառավարության անդամները տեղական դատարաններում ներպետական օրենսդրության հիման վրա ենթարկվեցին պատասխանատվության¹:

Երիտթուրքերի դատավարության նյութերն ու արձանագրությունները մեզ են հասել և թարգմանվել «Թաքվիմ-ի վաքայի» լրագրից: Նրա 1919թ. համապատասխան համարների ծանոթագրությունների մեջ հստակ նշված է, որ հարցաքննությունները արձանագրվել են նույնությամբ և ոճական որոշ ձևակերպումներից բացի ոչ մի ուղղում չի կատարվել²: Ի դեպ, այս արձանագրությունները իշխանությունների պաշտոնաթերթ համարվող «Թաքվիմ-ի վաքայի»-ի հավելվածներում

* Ընդունվել է տպագրության 30.07. 2009:

¹ Տե՛ս Барсегов Ю. Г. Турецкая доктрина международного права на службе политики геноцида (о концепции члена «комиссии примирения» Гюндюз Актана), М., 2002, с. 37.

² Տե՛ս Հայերի ցեղասպանությունը ըստ երիտթուրքերի դատավարության փաստաթղթերի: Առաջաբանը, թարգմանությունը և ծանոթագրությունները Ա. Յ. Փափազյանի, Եր., 1988, էջ 184:

տպագրվել են խիստ սահմանափակ տպաքանակով³: Փաստորեն մի կողմից նոր վարչակարգը իբրև թե ապահովում էր խոսքի ազատությունը և ռազմական հանցագործների դատավարության հրապարակայնությունը, բայց մյուս կողմից, նվազեցնելով թերթի տպաքանակը, փորձում էր թույլ չտալ տեղեկատվության լայն տարածումը: «Թաքվիմ-ի վիքայի» լրագրի հավելվածներում տպագրվել են երիտթուրքերի դատավարության ոչ բոլոր նյութերը, որոնք ընդհանուր առմամբ կազմել են 293 թղթապանակ⁴: Սակայն միայն տպագրված նյութերն իսկ բավարար են հայ բնակչության հանդեպ գործադրված հրեշավոր ծրագրի ու քաղաքականության եռությունը ամբողջությամբ հասկանալու համար:

Անհնար է կասկածի տակ դնել նման հեղինակավոր թուրքական լրագրում հրապարակված երիտթուրքերի դատավարության նյութերը, որոնք չափազանց կարևոր և անժխտելի վավերագրեր են: Դրանցից ակնհայտ է դառնում Հայոց ցեղասպանության ողջ եղելությունը Արևմտյան Հայաստանում և Օսմանյան կայսրության այլ տարածքներում: Այս վավերագրերը ամենահիմնավոր փաստարկներից մեկն են թուրքական կեղծարարության դեմ, որոնք ոչ միայն փարատում են Արամ Անտոնյանի կողմից ժամանակին հրապարակած Թալեաթի գաղտնի հեռագրերի հետ կապված կասկածները, այլև դրանց են ավելացնում նույն բովանդակությամբ բազմաթիվ այլ գաղտնի և հույժ գաղտնի փաստաթղթեր ու գաղտնագրեր:

Այնուամենայնիվ, ինչո՞ւ թուրքական պետությունը գնաց նախկին թուրքական կառավարության անդամներին պատասխանատվության կանչելու քայլին՝ նրանց մեղավոր ճանաչելով բոլոր ներկայացված հանցագործություններում: Ինչո՞ւ մի կողմից՝ խոչընդոտելով այդ հանցագործներին միջազգային ռազմական դատարանին (տրիբունալին) հանձնելու գործընթացը, մյուս կողմից՝ Թուրքիան կամավոր կերպով դիմեց նրանց դատապարտելու քայլին՝ սեփական ռազմական դատարանում:

Հարցին պատասխանելուց առաջ նշենք, որ դատական քննությունը սկսվեց 1919թ. ապրիլի 28-ին և դատարանի կարգավիճակի մի շարք փոփոխություններից հետո ավարտվեց 1919թ. հուլիսի 5-ին, երբ կայացվեցին հիմնական և մյուս վճիռները⁵: Հետպատերազմյան Թուրքիայում տիրող տրամադրություններից պարզ երևում էր, որ իրականում ոչ ոք չի ցանկանում մահապատժի ենթարկել երիտթուրք պարագլուխներին, քանզի, անգամ երկրից դուրս գտնվելով, նրանք շարունակում էին ազդել գործընթացների վրա: Զեմալ Աթաթուրքի հետագա քայլերը ասպացուցեցին այս իրողության ճշմարտացիությունը:

1919թ. երիտթուրքերի դատավարությունը նախաձեռնելիս մեծ վեզիր Դամադ Ֆերիդ փաշան փաստորեն նպատակ ուներ ռազմական հանցագործությունների մեղքը բարդել բացառապես «Միություն և առաջադիմություն» կուսակցության վրա՝ այդպիսով փորձելով պատասխանատվությունից զերծ պահել թուրք ազգը ու առավել ևս՝ Օսմանյան կայսրությունը⁶: Սակայն ակնհայտ էր նաև, որ մինչև բուն դատավարությունը սկսելը, Հայոց ցեղասպանության հիմնական կազմա-

³ Տես նույն տեղում, էջ 27:

⁴ Տես նույն տեղում, էջ 28:

⁵ Տես Դադրյան Բ. Обзор материалов турецкого военного трибунала по обвинению в геноциде армян: характер и значимость четырех основных серий судебного разбирательства, «Геноцид — преступление против человечества. Материалы 1-ого Московского Международного Симпозиума», М., 1997, с. 42.

⁶ Տես Հայրի ցեղասպանությունը ըստ երիտթուրքերի դատավարության փաստաթղթերի, էջ 16:

կերպիչներին թույլ էին տվել հեռանալ Գերմանիա⁷: Այս քայլի պատճառը առավել քան պարզ է, քանզի Էմվերի, Թալեսթի, Ջենայի, Նազըմի և մյուսների միայն հարցաքննության ընթացքում կրացահայտվեին այնպիսի փաստեր, որոնք միանշանակորեն կհանգեցնեին թուրքական պետության պատասխանատվությանը, ուստի այս «վտանգավոր» վկաները անհասպաղ պետք է հեռացվեին երկրից և ոչ մի դեպքում չպետք է մասնակցեին դատավարությանը:

Անկասկած, Թուրքիայի նոր վարչակարգը նշված երիտթուրք պարագլուխներին տվել էր ոչ միայն կյանքի, այլև թալանված ունեցվածքին տիրանալու հստակ երաշխիքներ: Այնուհասակ, որ առանց նման երաշխիքների երիտթուրքերը չէին հեռանա երկրից, քանզի կար Անտանտի երկրների արդարադատության ձեռքն ընկնելու վտանգը: Երիտթուրքերի իրական հաղթաթուղթը այս հարցում պետք է համարել այն, որ դոկտոր Նազըմը իր հետ երկրից դուրս էր բերել կուսակցական արխիվը⁸, որտեղ վարկաբեկիչ նյութեր էին պարունակվում ոչ միայն պաշտոնաթուղ, այլև գործող թուրք բարձրաստիճան պաշտոնյաների մասին և դրանց հրապարակումը կլինեի ոչ միայն տվյալ անձանց, այլև Թուրքիայի վերջը: Հետագայում հենց դատաքննության նյութերից պարզ դարձավ, որ «Սիւրբյուն և առաջադիմություն» կուսակցության կենտկոմին և «Թեշքիլաթը մահուսեին» (Հատուկ կազմակերպությանը) վերաբերող կարևոր գրությունները մեծ մասամբ ոչնչացվել են: Դրանում հիմնականում մեղավոր է ճանաչվում դոկտոր Նազըմը, որը կոմիտեի գործարքներն ու կատարած հանցագործությունները թաքցնելու նպատակով փախցրել է կուսակցության արխիվը⁹: Բնականաբար դատավարության ընթացքում շրջանցվում էր այն հարցը, թե ինչպե՞ս գլխավոր հանցագործներից մեկը հանդիսացող դոկտոր Նազըմին հաջողվեց փախչել երկրից՝ իր հետ տանելով այդքան պետական գաղտնիքներ պարունակող փաստաթղթերը:

Ավելին, Թուրքիայում արդարադատության սաբոտաժն իրականացվում էր պետական բարձր մակարդակով: Ռազմական, ներքին գործերի և արդարադատության նախարարություններում և այլ գերատեսչություններում թաքցվում և ոչնչացվում էին փաստաթղթեր, գաղտնի և հույժ գաղտնի համարվող գաղտնագրեր, արգելվում էր տեղական իշխանություններին իրականացնել դատական կարգադրությունները, մեղադրյալներին օգնում էին թաքնվել արդարադատությունից ու մեկնել երկրից և այլն¹⁰:

1919թ. մայիսին տեղի ունեցած վեց նիստերի ընթացքում հիմնականում՝ հարցաքննության են ենթարկվում երիտթուրքական կուսակցության կենտկոմի անդամները, Մեծ վեզիր Սաիդ Հալիմ փաշան և մի քանի նախարարներ:

Ողջ դատավարության ժամանակ մեղադրյալները գտնվում էին այնպիսի բարենպաստ պայմաններում, որ նույնիսկ բանտում հրավիրվում էին նախկին կառավարության նիստեր, որպեսզի մշակեն պաշտպանության ռազմավարությունը դատավարության ընթացքում¹¹: Մշակված ռազմավարության համաձայն նախ՝ անհրաժեշտ էր ռազմական դատարանի իրավասությունը կասկածի տակ դնելու

⁷ Տե՛ս նույն տեղում, էջ 13:

⁸ Տե՛ս նույն տեղում, էջ 13:

⁹ Տե՛ս նույն տեղում, էջ 183:

¹⁰ Տե՛ս Барсегов Ю. Г. Турецкая доктрина международного права на службе политики геноцида, с. 43.

¹¹ Տե՛ս նույն տեղում:

միջոցով որքան հնարավոր է ձգել ժամանակը՝ սպասելով երկրի ներքաղաքական վիճակի փոփոխությանը: Բացի այդ հարկ համարվեց ողջ մեղքը բարդել արդեն Թուրքիայից բացակայող երիտթուրք նախարարների ու պարագլուխների՝ Թալե-աթի, Էնվերի, Ջեմալի ու դոկտոր Նազրմի վրա: Քանզի ամբաստանյալները քաջ զիտակցում էին, որ նրանց նկատմամբ հնարավոր չի լինելու իրականացնել անզամ ամենախիստ վճիռը, սակայն այդ կերպ ներկա գտնվողները կարող են խուսափել պատասխանատվությունից կամ գոնե չդատապարտվել բարձր պատժաչափերի: Այս ռազմավարությունը, որը կարծես համաձայնեցվել էր նաև ռազմական դատարանի հետ, իրագործվեց ողջ դատավարության ընթացքում:

Կ. Պոլսում ԱՄՆ-ի գերագույն կոմիսար Լյուիս Հեկը 1919թ. փետրվարի 7-ի իր հեռագրում նշում էր, որ երիտթուրքերի դատավարությունը կատարվում է թուրքերին բնորոշ դանդաղկոտությամբ, և դատարանի պահվածքը վկայում է այն մասին, որ տրամադրվածություն չկա խիստ և արագ դատավճիռներ կայացնելու¹²:

Մեղադրյալներին պաշտպանելու համար ներգրավված էին 16 փաստաբաններ, որոշ մեղադրյալներ անզամ ունեին երկուսից ավելի փաստաբաններ: Պաշտպանական կողմը հղում կատարեց օսմանյան սահմանադրության 31-րդ հոդվածի վրա, որը նախարարներին պատասխանատվության կանչելու գործընթացը նախատեսում էր Գերագույն դատարանի իրավասության շրջանակներում, ուստի ռազմական դատարանը, ըստ պաշտպանների, իրավասու չէր դատելու այդ երիտթուրք պաշտոնյաներին¹³: Այնուհետև պաշտպանական կողմը հայտարարեց, որ հանցագործությունները, որոնցում ամբաստանվում են մեղադրյալները, սովորական հանցագործություններ չեն, այլ ավելի շատ կապված են «Տեղահանության մասին» օրենքի կիրառման հետ, որն ընդունվել էր կառավարության կողմից և հաստատվել սուլթանական հրամանագրով¹⁴: Փաստորեն պաշտպանական կողմն ընդունում էր, որ հանցագործությունը սովորական չէ, ավելին, նրանք խոստովանում էին, որ մեղադրանքը հիմնականում կապված է «Տեղահանության մասին» օրենքի կիրառման, այն է՝ տեղահանության պատրվակով հայ ժողովրդի զանգվածային սպանության կազմակերպման հետ: Քանի որ տեղահանությունը Հայոց ցեղասպանության քաղաքականության եղանակներից մեկն էր, ապա մեղքը կամ մեղադրանքը կախված էր գործունեության ոլորտից և նախարարական պարտականությունների կատարումից ու իշխանության իրացումից, հետևաբար մեղադրյալների նկատմամբ, ըստ պաշտպանների, պետք է կիրառվեր ոչ թե 33-րդ, այլ 92-րդ հոդվածը, որը վերաբերում էր Գերագույն դատարանի գործառնություններին ու իրավասությանը¹⁵: Իրականում մեղադրական կողմը փորձում էր «ապացուցել» մեղադրյալների անմեղությունը՝ հենվելով «պետության մեղքի» տեսության վրա: Եվ անզամ, եթե մեղադրյալների նկատմամբ կիրառելի էր 33-րդ հոդվածը, որով չէր ենթադրվում հանցագործությունների դիտարկումը ծառայողական պարտականությունների կատարման համատեքստում, հետևաբար չէր մտնում Գերագույն դատարանի իրավասությունների ներքո,

¹² Տե՛ս Барсегов Ю. Г. Турецкая доктрина международного права на службе политики геноцида, с. 43.

¹³ Տե՛ս Հայերի ցեղասպանությունը ըստ երիտթուրքերի դատավարության փաստաթղթերի, էջ 16:

¹⁴ Տե՛ս Дадриян В. Обзор материалов турецкого военного трибунала по обвинению в геноциде армян, с. 40.

¹⁵ Տե՛ս նույն տեղում:

ապա այդ դեպքում տվյալ գործերը պետք է քննվեին քրեական դատարանների, այլ ոչ թե հատուկ ռազմական դատարանի կողմից: Այս դրույթից պարզ երևում էր, որ պաշտպանական կողմը ամեն կերպ փորձում է ընդհատել դատավարությունը՝ վարույթը այլ դատարան տեղափոխելու պատրվակով փորձելով ժամանակ շահել և ձգձգել նրա ընթացքը:

Եվ վերջապես՝ պաշտպանական կողմը առարկություն առաջ քաշեց, համաձայն որի դատարանը իրավասու չէ որոշել, թե սահմանադրության հոդվածներից որն է կիրառելի տվյալ դեպքում, քանզի հիմնական օրենքի 117 հոդվածը սահմանադրության վերջնական մեկնաբանման իրավունքը վերապահել է Սենատին¹⁶:

Պաշտպանական կողմի բոլոր փորձերը՝ դուրս բերել դատավարությունը ռազմական դատարանի իրավասությունից, անհաջողությամբ ավարտվեցին: Այդ միջնորդություններին նախ՝ արձագանքեց դատախազ Մուսթաֆա Նազմի փաշան: Նա նշեց, որ եթե դատաքննության ընթացքում հաստատվի հանցանքի՝ բացառապես պաշտոնավարության հետ կապ ունենալը, ապա միայն այդ ժամանակ տվյալ կետին ուշադրություն կդարձվի¹⁷: Դատարանն իր հերթին մերժեց պաշտպանական կողմի այն հակափաստարկը, որ հանցագործությունները հանդիսանում են օրենքի կիրառման հետևանք, քանզի, ըստ դատարանի, եթե անգամ նկատի առնվի այն, որ տեղահանությունը զուգորդվել է կոտորածով, այդուհանդերձ սպանությունը չի դադարում այդպիսին լինելուց, և միայն զանգվածային սպանությունների հետ գործադիր իշխանության առնչություն ունենալը հաստատվելու դեպքում դատարանը կարող է հաշվի նստել պաշտպանական կողմի այդ փաստարկի հետ¹⁸: Այսպիսով, ռազմական դատարանը, դեռ դատավարությունը չսկսած և փաստերն ու մանրամասնությունները չուսումնասիրած, հենվելով բացառապես մեղադրական եզրակացության վրա, նախապես առաջնորդվում էր զանգվածային սպանություններին իշխանությունների մասնակցությունը չընդունելու կանխավարկածով: Սակայն արդեն դատավարության ընթացքում ներկայացվեցին անհրաժեշտ և բավարար ապացույցներ, որ կոտորածը հանդիսացել է մեղադրյալների վարած քաղաքականության և կայացրած որոշումների անբաժանելի մասը, բայց դատարանի ձևակերպմամբ՝ դա մեղադրյալներն արել էին ոչ որպես նախարարներ, այլ իբրև գաղտնի կազմակերպության անդամներ:

Դատարանը նաև նշեց, որ պաշտպանական կողմի տվյալ փաստարկը կապ չունի մեղադրական եզրակացության հետ, ինչը և հանդիսանում է դատարանի հիմնական խնդիրը, այն է՝ «սպանությունների և անձնական անօրինական հարստացման» քննությունը¹⁹:

Այսպիսով, պետք է փաստենք, որ մեղադրանքը ի սկզբանե կանխատեսված ձևով կազմվել էր մեղադրյալների զուտ անձնական պատասխանատվությունը կամ երիտթուրքական կուսակցության մեղքը հիմնավորելու, այլ ոչ թե նրանց իբրև բարձրաստիճան պետական պաշտոնյաների կատարած հանցագործությունների սկզբունքով դատասպարտելու համար, ինչը միանշանակորեն հանգեցնե-

¹⁶ Տե՛ս Дадриян В. Обзор материалов турецкого военного трибунала по обвинению в геноциде армян, с. 40.

¹⁷ Տե՛ս Հայերի ցեղասպանությունը ըստ երիտթուրքերի դատավարության փաստաթղթերի, էջ 53:

¹⁸ Տե՛ս Дадриян В. նույն տեղում, էջ 41:

¹⁹ Տե՛ս նույն տեղում:

լու էր նաև թուրքական պետության պատասխանատվությանը, որից և ջանասիրաբար խուսափում էր թուրքական ռազմական դատարանը: Կազմված մեղադրանքի հիման վրա թուրքական դատարանը մերժեց «պետության գործողության վրա» հղման իրավաչափությունը՝ նշելով, որ կոտորածը, եթե նույնիսկ այն դիտարկվի իբրև տեղահանությանը բնորոշ երևույթ, իրենից ներկայացնում է սպանություն, հետևաբար այն առանձին և ինքնուրույն գործողություն է:

Դատախազ Մուսթաֆա Նազմի փաշան իր հերթին պարզաբանեց, թե մեղադրական եզրակացության մեջ թվարկված հանցագործությունները կատարվել են ոչ թե կառավարության, այլ կուսակցության կենտրոնական կոմիտեի անունից և նրա պլենումների որոշումներից ելնելով²⁰: Այս պարզաբանման հիման վրա դատարանը նշեց, որ հղումը պետության գործողության վրա կարող է քննարկվել միայն այն պայմանով, եթե ապացույցներ լինեն, որ կոտորածը ոչ թե կանխամտածված էր, այլ ընդամենը պաշտոնական պարտականությունների կատարման անխուսափելի արդյունք²¹: Դատարանը, ղեկավարվելով սուլթանական կառավարության ընդհանուր քաղաքական գծով, եզրակացնում է, որ եղած ապացույցները հաստատում են, թե կոտորածը այն քաղաքականության ու կայացրած որոշումների մի մասն էր, որն իրագործվել է մեղադրյալների, իբրև գաղտնի, դավադիր կազմակերպության անդամների կողմից, այլ ոչ թե նախարարի և ողջ կառավարության պաշտոնական պարտականությունների շրջանակներում²²:

Հարց է ծագում. ո՞ր կառավարությունն է իր «պաշտոնական պարտականությունների շրջանակում» ներառում նման նպատակներ: Ակնհայտ է, որ տեսականորեն անզամ հնարավոր չէ պատկերացնել որևէ կառավարություն, որը պաշտոնապես առաջնորդվում է նման նորմերով: Ուրեմն Օսմանյան կայսրությունում ձևավորվել էր ճիշտ այն համակարգի նախատիպը, որը հետագայում առկա էր ֆաշիստական Գերմանիայում՝ հրեական Հոլոքոստի իրականացման տարիներին, ի դեմս նացիոնալ-սոցիալիստական կուսակցության և նրա մարդատյաց գաղափարախոսության, որոնց նույնականությունը «Երրորդ ռայխի» հետ ապացուցվեց Նյուրնբերգյան դատավարության ընթացքում:

Ուրեմն, այս հիմնավորումները չէին դիմանում ոչ մի քննադատության, քանզի ակնհայտ էր, որ գաղտնի կազմակերպության անդամները կառավարության նույն նախարարներն էին, և սլյալ գաղտնի կազմակերպությունը փաստորեն սերտաձել էր իշխանության հետ՝ ըստ էության դառնալով Օսմանյան կայսրության իրական իշխանությունը: Պատահական չէ, որ Օսմանյան կայսրության պատերազմական շրջանի կառավարությունը ժամանակի դիվանագիտական փաստաթղթերում միանշանակորեն անվանվում էր հենց «երիտթուրքական կառավարություն», ինչը լավագույնս ընդգծում է երիտթուրքական կուսակցության՝ օսմանյան իշխանությունների հետ սերտաճման պատմական փաստը: Ըստ այդմ, անհնար էր տարանջատել դրանք իրարից, այլ հարկ էր փաստել այդ երկուսի նույնականացումը (իդենտիֆիկացիան): Ի վերջո, երիտթուրքական ողջ կառավարությունը և նրա առանձին անդամը, անկախ այն բանից, թե ինչ կազմակերպության էր պատկանում, իշխանության մի-

²⁰ Տե՛ս Հայերի ցեղասպանությունը ըստ երիտթուրքերի դատավարության փաստաթղթերի, էջ 16:

²¹ Տե՛ս Барсегов Ю. Г. Турецкая доктрина международного права на службе политики геноцида, с. 40.

²² Տե՛ս նույն տեղում:

չոցով ներկայացնում էր թուրքական պետությունը, ուստի և նրա կատարած ցանկացած գործողություն իրավամբ պետք է գնահատվեր իբրև պետական իշխանության ներկայացուցչի գործողություն, որի համար պատասխանատու է ոչ միայն տվյալ անձը, այլև այն իշխանությունն ու պետությունը, որին նա ներկայացնում է, տվյալ դեպքում՝ Օսմանյան կայսրությունը: Հակառակ պարագայում տվյալ անձը չպետք է զբաղեցներ նման բարձրաստիճան պաշտոն և ներկայացներ տվյալ պետությունը: Սակայն պատերազմող Թուրքիայում, երիտթուրքական կուսակցության՝ իշխանության հետ սերտաճելու պայմաններում նման բարձրաստիճան պաշտոնյաները ոչ միայն պաշտոնաթող չէին արվում, այլ հակառակը, կուսակցական պատկանելությունը և գաղտնի կազմակերպության անդամությունը անհրաժեշտ ու որոշիչ հանգամանք էր պետական բարձրաստիճան պաշտոն զբաղեցնելու և յուրային համարվելու համար:

Վերը նշվածից միանշանակորեն բխում է, որ հնարավոր չէր որևէ հարցում մեղադրել երիտթուրքական կառավարությանը, առանց թուրքական իշխանությունների և համապատասխանաբար նաև՝ թուրքական պետությանը մեղադրելու և հակառակը: Եվ եթե անգամ մի պահ ենթադրենք, որ Թուրքիան որպես պետություն չէր ցանկացել, որ կայսրության հայ բնակչության հետ լիներ այն, ինչ կատարվեց, ապա թուրքական պետությունը միևնույն է, մեղավոր էր այն հարցում, որ թույլ էր տվել երիտթուրքերի սերտաճումը պետական իշխանության հետ և հետևապես պատասխանատու էր այդ իշխանության կատարած քայլերի համար: Թուրքիայի կառավարության ներսում, որքան էլ հետո՝ դատավարության ժամանակ, փորձեին արդարանալ որոշ անձինք, չի դրսևորվել ակնհայտ հակազդեցություն երիտթուրքերի քաղաքականությանը, ինչը խոսում է այն մասին, որ կառավարության բոլոր անդամները, եթե նույնիսկ չեն կիսել երիտթուրքերի գործելաժողովը, ապա բացարձակապես չեն ընդդիմացել այդ քաղաքական կուրսին: Իսկ դա նշանակում է, որ լռելյայն համաձայնվել են կատարվածի հետ: Ողջ ժողովրդի զանգվածային ոչնչացման փաստին լռելյայն համաձայնությունը նույնպես հանցագործություն է, բայց փոքր-ինչ այլ հատկանիշներով: Թուրքական պատմագրությունը դեռևս չի վկայաբերել երիտթուրքերի քաղաքականությանը կառավարության ներսում հակադրվելու որևէ փորձ, կամ գոնե կառավարության անդամի հրաժարականի փաստ՝ ի նշան բողոքի, ինչը կրկին խոսում է երիտթուրքերի և թուրքական իշխանության նույնականության մասին:

Բացի այդ, դատարանը անհիմն կերպով փորձում էր իրարից տարանջատել «կանխամտածվածության» և «պաշտոնական պարտականությունների կատարման» եզրույթները, ապրիորի գտնելով, որ դրանք չեն կարող մեկտեղվել, ինչի «անխուսափելի արդյունքը» կարող էր լինել հայ բնակչության զանգվածային ոչնչացումը իր պատմական հայրենիքում: Մինչդեռ պատմական փաստերը ուղղակիորեն վկայում են, որ իշխանության գալուց հետո երիտթուրքական կուսակցության՝ հայերին ոչնչացնելու կանխամտածված ծրագրերը, ինչը ընդունեց նաև ռազմական դատարանը, վաղուց արդեն վեր էին ածվել Օսմանյան կայսրության երիտթուրքական կառավարության պետական ծրագրի և սկսել էին կենսագործվել պետական ողջ ռեսուրսների գործադրմամբ: Նշենք նաև, որ առանց իշխանության գալու և առանց պետական իշխանության երիտթուրքական կուսակցությու-

նր ի վիճակի չէր լինի իրագործել այդ ծրագիրը. միայն պետական իշխանությունն ու լծակները նրանց ընձեռեցին նման հնարավորություն: Բնականաբար, այս ակնհայտ և թուրքական պետության համար վտանգավոր փաստարկները անտեսվում էին թուրքական արդարադատության կողմից, քանզի դատարանը ընդամենը կատարում էր թուրքական պետության պատվերը:

Այսպիսով, նման ոչ պատշաճ պարզաբանումներով փորձ էր կատարվում պատասխանատվությունը բացառապես բարդել արդեն իրավաբանորեն գոյություն չունեցող կուսակցության վրա, այն հեռու պահել նախկին կառավարությունից, հետևաբար նաև՝ պետությունից: Պատշաճ պարզաբանումը տվյալ դեպքում պետք է լիներ այն, որ նախկին երիտթուրք նախարարները և այլ բարձրաստիճան թուրք պաշտոնյաներ պետք է դատվեին ոչ թե գերագույն դատարանում, այլ հենց ռազմական դատարանում այն պարզ պատճառով, որ նրանք հանդիսանում էին պատերազմական հանցագործներ, ճիշտ այնպես, ինչպես Երկրորդ աշխարհամարտի նացիստ հանցագործներին Նյուրնբերգում դատում էր միջազգային ռազմական դատարանը:

Այնուհետև դատարանը մասնավոր որոշման մեջ ուշադրություն դարձրեց այն բանի վրա, որ կատարված հանցագործություններում ղեկավարող դերը պատկանում է «Իթթիհատ» կուսակցությանը, և «անհատական հանցագործությունները» կատարվել են տվյալ ղեկավարող դերի առկայության պայմաններում²³:

Փաստըն բուրֆական ռազմական դատարանը գտնվում էր Պարադոսալ վիճակում. մի կողմից այն ջանում էր կասարված զանգվածային հանցագործությունները ներկայացնել և ֆնել իբրև սովորական անհասական հանցագործություններ, սակայն մյուս կողմից՝ կասարված սղանությունների ու բռնությունների զանգվածային բնույթը այնքան ակնհայտ էր, որ հնարավոր չէր դրանք դիտարկել բացառապես անհասական հանցագործությունների տեսքով, ուստի դատարանը ստիպված ընդունում էր կազմակերպչական հանգամանք, ինչը վերագրվում էր բացառապես երիտթուրքական կուսակցությանը: Սակայն անգամ այս ձևակերպմամբ դա չափազանց կարևոր որոշում էր այն իմաստով, որ Օսմանյան կայսրությունում գոյություն ունեին և գործում էին նաև այլ կուսակցություններ, բայց նրանցից և ոչ մեկը չէր մեղադրվում զանգվածային հանցագործություններում ղեկավարող դեր ունենալու մեջ՝ այն պարզ պատճառով, որ միայն երիտթուրքական կուսակցությունը, տիրապետելով պետական ողջ իշխանությանը և օգտագործելով նրա ռեսուրսները, իրականացրեց հայ բնակչության զանգվածային սպանությունը և ունեզրկումը: Բնականաբար, թուրքական դատարանը չէր ցանկանում կատարել հաջորդ՝ Թուրքիայի համար վտանգավոր այն եզրահանգումը, համաձայն որի՝ երիտթուրքական կուսակցությունը պետք է նույնացվեր թուրքական իշխանության ու հետևաբար նաև՝ պետության հետ, դրանից բխող բոլոր հետևանքներով:

Դատարանը մերժեց նաև պաշտպանական կողմի առարկությունները՝ սահմանադրության և ռազմական դատարանի իրավասության հետ կապված: Հաշվի առնելով այն հանգամանքը, որ պատերազմական իրավունքը ուժի մեջ էր դրվել հենց «Իթթիհատ» կուսակցության վարչակարգի կողմից և շարունակում էր ուժի մեջ մնալ, ուստի ո՛չ սահմանադրության 32 և ո՛չ էլ 33-րդ հոդվածները, ըստ դա-

²³ Steu Дадриян В. Обзор материалов турецкого военного трибунала по обвинению в геноциде армян, с. 41.

տարանի, չէին կարող կիրառվել, ինչի վրա պնդում էր պաշտպանական կողմը²⁴: Դատարանը մատնանշում էր օսմանյան սահմանադրության 113-րդ հոդվածը, որը վերաբերում էր պատերազմական իրավունքի ուժի մեջ մտնելուն, որից հետո նախատեսվում էր քաղաքացիական իրավունքների գործողության ժամանակավոր կասեցում: Դատարանը մեկ անգամ ևս ընդգծեց մեղադրական եզրակացության ձևակերպումը՝ «քանի դեռ գործում է ռազմական իրավունքը, քաղաքացիական իրավունքները լուրջ են», և հետևաբար ռազմական դատարանները դառնում են միակ պատժիչ մեխանիզմները երկրում:

Հատկանշական է, որ այս դեպքում ռազմական դատարանը հիմք էր ընդունում նախկինում երիտթուրքական կառավարության անդամների, իսկ տվյալ պահին՝ մեղադրյալների կայացրած որոշումը՝ կապված պատերազմական դրություն հայտարարելու հետ, ճանաչելով նրանց գործողությունը իբրև պետական իշխանության ներկայացուցիչների կողմից կատարած քայլ և հիմնվում էր դրա վրա: Սակայն մյուս դեպքերում՝ կապված հայերի կոտորածների հետ, նրանց դիտարկում էր ոչ թե որպես կառավարության անդամների, այլ մասնավոր անձանց, լավագույն դեպքում՝ կուսակցության կամ գաղտնի կազմակերպության անդամների: Սա նույնպես ապացուցում է, որ Իթքիհատի և թուրքական պետության քաղաքականության տարանջատումը իրականացվում էր «ընտրովի» ձևով՝ ըստ նպատակահարմարության:

Դատարանը մերժեց նաև մեղադրյալների այն հայտարարությունը, որ օսմանյան խորհրդարանի Հինգերորդ հանձնաժողովը, որը ստեղծվել էր երիտթուրքերի կատարած հանցագործությունների քննության համար, հանդես է եկել Գերագույն դատարանին այս գործը փոխանցելու օգտին՝ այն հիմնավորմամբ, որ տվյալ պահին խորհրդարանը ցրված է սուլթանի կողմից և հետևաբար խորհրդարանի քվեարկությունը և որոշումը փաստորեն կորցրել է իր ուժը²⁵: Այս ձևակերպումը առնվազն տարօրինակ է, քանզի խորհրդարանի ցրված լինելուց տրամաբանորեն չի կարող բխել նրա կայացրած որոշումների ուժը կորցրած լինելը: Նույն հաջողությամբ ռազմական դատարանը իր գործունեությունը հիմնավորում էր արդեն իշխանությունից հեռացված երիտթուրքական կառավարության կողմից ուժի մեջ դրված պատերազմական իրավունքով, որը, եթե դատենք նույն տրամաբանությամբ, երիտթուրքերի տապալումից հետո պետք է դադարեցվեր, և հետևաբար չէր կարող ստեղծվել նման դատական ատյան: Այս ամենը խոսում է այն մասին, որ թուրքական արդարադատությունը կամայական մեկնաբանություններ էր տալիս օսմանյան օրենսդրությանը՝ թուրքական պետությանը կատարված հանցագործությունների պատասխանատվությունից զերծ պահելու համար:

Եվ վերջապես՝ դատարանը նշում էր, որ սուլթանի կողմից հրապարակված հատուկ կայսերական հրամանագիրը ունի դեկրետ-օրենքի ուժ, որը դատարանին տալիս է անհրաժեշտ լիազորություններ և իրավասություն՝ մեղադրյալների մեղքի քննության և նրանց դատապարտման համար²⁶: Այսպիսով, դատավարության սկզբնամասում ծագած՝ ռազմական դատարանի իրավասության հետ կապված բանավեճը զուտ իրավաբանական չէր, այլ ուներ ավելի խորքային իմաստ:

²⁴ Տե՛ս Барсегов Ю. Г. Турецкая доктрина международного права на службе политики геноцида, с. 40.

²⁵ Տե՛ս Дадриян В. Обзор материалов турецкого военного трибунала по обвинению в геноциде армян, с. 41.

²⁶ Տե՛ս նույն տեղում:

Մեղադրյալների փաստաբանները որդեգրել էին այնպիսի մարտավարություն, որ հնարավորինս ձգձգվի դատաքննությունը, որպեսզի հնարավոր լինի ժամանակ շահել: Իսկ երբ դա չհաջողվեց, մեղադրյալների փաստաբանները փորձեցին իրենց պաշտպանյալների «անմեղությունը ապացուցել» կամ գոնե մեղմացնել նրանց մեղքի չափը՝ ծառայողական պարտականությունները կատարելու հանգամանքով: Պաշտպանական կողմը փորձում էր օգտագործել «պետական ակտի» հայեցակարգը, համաձայն որի տեղահանությունը հանդիսանում էր ոչ թե երիտթուրք գործիչների անձնական նախաձեռնությունը, այլ թուրքական պետության պետական անհրաժեշտությունից բխող գործողություն, ինչի մասին վկայում էր և սուլթանի կողմից հաստատված «Տեղահանության մասին» օրենքը: Նման մեկնաբանության պարագայում կատարված հանցագործությունների պատասխանատվությունը տեղափոխվելու էր նաև թուրքական պետության վրա: Անշուշտ, մեղադրական կողմը չէր կարող թույլ տալ մնալ բան, քանզի նախապես տրամադրված էր պատասխանատվությունը վերագրել բացառապես երիտթուրքական կուսակցությանը:

Մեղադրական եզրակացության մեջ նշվում էր, որ ավելորդ է հիշատակել սահմանադրության 92-րդ հոդվածը, քանզի «նախարարի կամ նախարարների խորհրդի անդամի պաշտոնավարության հետևանքով» կատարված հանցագործությունը վերաբերում է քաղաքական հանցագործությանը, իսկ սահմանադրության 33-րդ հոդվածի համաձայն՝ սովորական հանցագործություն կատարելու կամ մասնակցելու դեպքում նախարարին ոչ մի արտոնությունից օգտվելու իրավունք չի վերապահվում²⁷: Փաստորեն մեղադրող կողմը հակված էր հայ բնակչության զանգվածային սպանության կազմակերպումը որակելու որպես սովորական հանցագործություն, այնինչ հետագայում՝ դատավճռում, երիտթուրքերի կատարած հանցագործությունները միանշանակորեն որակվում էին իբրև քաղաքական:

Դատաքննության ընթացքում, որի հիմնական հարցը հայերի զանգվածային կոտորածներն էին, լուրջ հիմքեր առաջացան այն բանի համար, որ մեղադրող կողմը առաջարկելը ընդարձակել մեղադրանքների դաշտը և ներառել դրանց մեջ «կառավարության տապալման» մեղադրանքը: Ամբաստանյալները մեղադրվում էին նաև օսմանյան պետության բոլոր կառավարական կառույցներում իշխանության չորրորդ ճյուղի ստեղծման մեջ²⁸: Սա ակնհայտ հորինված ձևակերպում էր, քանզի «կառավարության տապալում» նշանակում է պետական իշխանության զավթում, ուստի խոսքը պետք է լիներ ոչ թե իշխանության ներսում, ի դեմս Իթթի-հատի կամ «Հատուկ կազմակերպության», իշխանության՝ այսպես կոչված հանցագործ չորրորդ ճյուղի ստեղծման, այլ ողջ պետական իշխանության բռնազավթման ու տիրապետման մասին: Սակայն այս հորինված ձևակերպմամբ մեղադրող կողմը կրկին փորձում էր թույլ չտալ պատասխանատվության տարածումը իշխանության զավթումից հետո պետական իշխանություն ներկայացնող երիտթուրքական կառավարության վրա:

Մեղադրական եզրակացության ուղղված տարբերակը ներառում էր այնպիսի հանցագործություններ, ինչպիսիք են՝ կոտորած, ունեցվածքի յուրացում, դի-

²⁷ Տե՛ս Գայերի ցեղասպանությունը ըստ երիտթուրքերի դատավարության փաստաթղթերի, էջ 48:

²⁸ Տե՛ս Дадриян В. Обзор материалов турецкого военного трибунала по обвинению в геноциде армян, с. 42.

ակների և տների հրկիզում, բռնաբարություններ, կտտանքներ և հալածանքներ: Հետագայում ավելացվեց լրացում, որ հանցագործությունները կատարվում էին «հատուկ կազմակերպված ձևով», երբ տեղահանվողները հավաքվում էին խմբերով և հետո ոչնչացվում էին: Մեղադրական եզրակացության նոր տարբերակում հստակ ընդգծվում էր այն փաստը, որ տեղահանությունը պայմանավորված չէր ո՛չ ռազմական անհրաժեշտությամբ և ո՛չ էլ կարգապահական հանգամանքներով: Նշվում էր, որ տեղահանությունը կանխամտածված էր, և այդ մասին որոշումը կայացվել էր Իթթիհատ կուսակցության կենտրոնական կոմիտեում, և դրա ողբերգական հետևանքները զգացվեցին Օսմանյան կայսրության գրեթե բոլոր անկյուններում²⁹:

Թուրք կեղծարարներին լավագույնս կարելի է պատասխանել հենց թուրքական դատարանի փաստաթղթերով: Առաջին և հաջորդ մեղադրական եզրակացություններում բերված ծածկագիր հեռագրերը, նամակները, վկայում են տեղահանությունների կանխամտածված և հատուկ կենտրոնի հրահանգներով ու գաղտնի հրամաններով կազմակերպված լինելու մասին, և բացի այդ հստակ նշվում է, որ դրանք չեն ունեցել սահմանափակ կամ տեղական բնույթ: Մեղադրող կողմը ընդգծում էր, որ հանցագործության մտադրության առկայությունը չի կարող կասկածի տակ դրվել՝ բերելով բնակչության զանգվածային տեղահանության կամ անհավատարիմ համայնքին պատժելու արդարացումները: Առավել ևս, որ, ինչպես նշվում էր մեղադրական եզրակացություններից մեկում, տեղահանությունը ռազմական անհրաժեշտություն կամ կարգապահական գործողության միջոց չի եղել, ինչպես դա ներկայացնում են թուրքական պաշտոնական պատմագրության ներկայացուցիչները: Մեղադրական եզրակացության արձանագրության մեջ նշվում է, որ երիտթուրքերի ընդունած համընդհանուր ծրագրի իրագործման նպատակն է եղել «վերջնականապես լուծել չլուծված խնդիրները»: Ակնհայտ է, որ դրանց մեջ առաջին տեղն էր զբաղեցնում Հայկական հարցը³⁰: Գլխավոր դատախազի մեղադրական եզրակացության մեջ ընդգծվում էր, որ հայերի տեղահանությունը կոտորածի պատրվակ էր, և որ դա հաստատված փաստ է, ինչը այնքան ակնհայտ է, որքան այն, որ երկուսին գումարած երկուս հավասար է չորս³¹: Մշակված ծրագրի կանխամտածված լինելու հանգամանքը դատաքննության ընթացքում հաստատվեց նաև գեներալ Վեհիբի վկայություններով:

Մեղադրական եզրակացության մեջ նաև նշվում էր, որ հայերի ոչնչացման ծրագրի քողարկման նպատակով ղեկավարությունը որոշումների կատարումը ապահովում էր գաղտնի բանավոր ու գրավոր հրամաններով ու կարգադրություններով, որոնք ենթակա էին ոչնչացման³²: Սա լավագույն պատասխանն է բոլոր այն թուրք հեղինակներին, որոնք փորձում են կեղծ ու շինծու որակել Թալեթաֆ փաշայի գաղտնի հեռագրերը: Փաստորեն հենց թուրքական արդարադատությունն էր ընդունում նման գաղտնագրված կարգադրությունների առկայությունը՝ դրանք համարելով երիտթուրքերի գործելաճը բնութագրող կարևոր հանգամանք:

²⁹ Տե՛ս Дадриян В. Обзор материалов турецкого военного трибунала по обвинению в геноциде армян, с. 43:

³⁰ Տե՛ս Барсегов Ю. Г. Турецкая доктрина международного права на службе политики геноцида, с. 39.

³¹ Տե՛ս նույն տեղում:

³² Տե՛ս նույն տեղում:

1919թ. հունիսի 19-ի մեղադրական եզրակացության մեջ մատնանշվում էր նաև, որ շրջանային պատասխանատու քարտուղարներն իրենց գործունեության ընթացքում, կուսակցության կենտկոմի և կառավարության կողմից ստացված բանավոր և գրավոր գաղտնի հրամանների համաձայն, անօրինական ձևով միջամտել են կառավարության գործերին և մասնակցել Թալեսթ փաշայի և նրա գործընկերների կատարած հանցագործություններին³³:

Տվյալ դատողությունները խիստ հակասական են, քանզի մի կողմից նշվում է պատասխանատու քարտուղարների՝ կառավարության գործերին անօրինական ձևով միջամտելու մասին, իսկ մյուս կողմից ընդգծվում է, որ նրանք կատարում էին բացի կուսակցականից, նաև կառավարության հրահանգները և այդպիսով փաստորեն մասնակցում էին ներքին գործերի նախարար հանդիսացող Թալեսթ փաշայի ու նրա գործընկեր-նախարարների հանցագործություններին, որոնք, ըստ մեղադրական եզրակացության, «նպատակ էին դրել շեղել պետությունը իր օրինական ուղուց»³⁴:

Մեղադրական եզրակացության համեմայնդեպս տվյալ հատվածից պարզորոշ երևում է, որ հանցագործությունները կատարվում էին ամենաբարձր պետական մակարդակով, և եթե անգամ դա դիտարկվում է «պետությունը իր օրինական ուղուց շեղելու» տեսանկյունից, ապա միևնույն է, տվյալ պետությունը պետք է պատասխանատվություն կրի այդ «շեղումը» թույլ տալու համար, ինչը կարող է հանդիսանալ նրա՝ օրինական ուղու վրա վերադառնալու միակ ճշմարիտ ճանապարհը:

Բացի բուն դատավճռից, թուրքական ռազմական տրիբունալը հատուկ որոշում է կայացրել փախուստի մեջ գտնվող հանցագործների հետ կապված, որում փաստորեն խոստովանում է, որ երիտթուրքական կուսակցությունը իր ձեռքն էր վերցրել երկրի ողջ իշխանությունը³⁵: Դրա հիման վրա նույնպես կարելի է պնդել, որ երկիրը պատասխանատու է երիտթուրքական կուսակցության կատարած հանցագործությունների համար, որոնց թույլ է տվել իրենց ձեռքը վերցնել ողջ իշխանությունը:

1919թ. հուլիսի 5-ին ռազմական դատարանը հրապարակեց հինգ կետից բաղկացած վճիռ, որոնցից առաջինով մեղադրյալները մեղավոր էին ճանաչվում հայերի զանգվածային կոտորածներ կազմակերպելու մեջ: Դատավճռում նշվում էր, որ երիտթուրքերը պնդում են, թե կոտորածների մասին իբր թե տեղեկացել են դրանց գործադրվելուց հետո, սակայն դատարանը նախ նշեց, որ նրանք տեղեկացել են այդ մասին ոչ թե հետո, այլ հենց կոտորածների ընթացքում և մեղադրեց նրանց, որ այդ մասին իրազեկ դառնալուց հետո էլ ոչ մի միջոց չեն ձեռնարկել կոտորածները կանխելու համար³⁶: Այսպես, շեյխ ուլ-իսլամ Մուսա Քյազիմ էֆենդին, որը որպես կրոնական առաջնորդ կարող էր մեծ ազդեցություն ունենալ այդ վայրագությունները խափանելու հարցում, ոչ մի էական քայլի չդիմեց: Նա թեև փորձեց արդարանալ դատարանում, որ ինքը պատասխանատու չէ կառավարության անդամների գործադրած հանցագործ արարքների համար, որ մեղավոր է ներքին գործերի նախարարությունը, սակայն խոստովանեց, որ իսլամը և կուսակցությունը համաձույլ մի

³³ Տե՛ս Հայերի ցեղասպանությունը ըստ երիտթուրքերի դատավարության փաստաթղթերի, էջ 22, 135:

³⁴ Հայերի ցեղասպանությունը ըստ երիտթուրքերի դատավարության փաստաթղթերի, էջ 135:

³⁵ Տե՛ս նույն տեղում, էջ 113:

³⁶ Տե՛ս նույն տեղում, էջ 122:

ամբողջականություն էին և կուսակցության որոշումները ենթակա էին անհապաղ իրականացման, որ կուսակցությունից դուրս գալը նշանակում էր հրաժարվել իսլամի կրոնից³⁷: Հոգևոր առաջնորդի ցուցումները առավել քան բնութագրական են, և ճիշտ. այնպես, ինչպես ավելի բարձր համարվող իսլամն էր միանույն կերպով բնութագրական կուսակցության հետ և կազմել մեկ ամբողջություն, նույնը կատարվել էր նաև կուսակցության և պետական իշխանության հետ:

Բացի հայերի կոտորածներից, դատարանը երիտթուրքերին մեղադրում էր նաև նրանում, որ անցած ժամանակի, այսինքն՝ աշխարհամարտի ընթացքում, նրանց կատարած քաղաքական հանցավոր սխալների հետևանքով կայսրության բազմաթիվ երկրամասեր տարբեր պատրվակներով «ձեռքից գնացին»³⁸: Դատարանը մեղադրում էր երիտթուրքերին նրանում, որ պատերազմ հայտարարելու խնդրում նրանք անհրաժեշտ չեն համարել տվյալ հարցը գոնե քննարկել պատգամավորների մեջլիսում, մինչդեռ վեհապետերն անգամ տարակուսել են նման հարցում անմիջական վճիռ և հրաման արձակել³⁹: Կարծում ենք, սա նույնպես շատ խոսուս փաստարկ է, որը կրկին վկայում է պետական ողջ իշխանությունը երիտթուրքերին պատկանելու, ուստի՝ նրանց կատարած հանցագործությունների համար պետության պատասխանատվության մասին:

Դատարանը մեղավոր ճանաչեց երիտթուրք պարագլուխներին առաջին աստիճանի զանգվածային սպանությունների մեջ ու մահվան վճիռ կայացրեց Թալեաթի, Էնվերի, Ջեմալի և դոկտոր Նազըմի նկատմամբ (բոլորին՝ հեռակա կարգով): Թալեաթի, Էնվերի, Ջեմալի և դոկտոր Նազըմի նկատմամբ կիրառվել է թուրքական քրեական օրենսգրքի 45-րդ հոդվածի առաջին կետը, համաձայն որի՝ «սահմանադրության մեջ ամրագրված կառավարման ձևն ու էությունը, կամ վսեմ սուլթանապետությունում գոյություն ունեցող կարգերի բռնի կերպով փոխելու կամ հեղաշրջելու նախաձեռնության մեջ գտնվող անձնավորությունների գործունեությունը հաստատվելու դեպքում սահմանվում է մահապատիժ»⁴⁰: Ինչպես տեսնում ենք, երիտթուրք պարագլուխներին մահապատիժ են դատապարտել ոչ այնքան հայերի զանգվածային կոտորածներ կազմակերպելու, որքան պետական իշխանությունը բռնազավթելու համար, ինչը ամենաձանր պետական ու քաղաքական հանցագործությունն էր համարվում Թուրքիայում, ուստի իշխանությունը զավթած լինելու պայմաններում երիտթուրքերի կատարած բոլոր հանցագործությունների և մասնավորապես հայերի զանգվածային սպանությունների համար, նրանց հետ միասին, պատասխանատու է թուրքական պետությունը՝ դրանից բխող բոլոր հետևանքներով:

Մյուս մեղադրյալները դատապարտվեցին տարբեր ժամկետների ազատագրկման, որոնց թվում էին կայսրության հոգևոր առաջնորդ Մուսա Բյազիմը, Էկոնոմիկայի նախարարը, որոնք դատապարտվեցին 15 տարվա տաժանակիր աշխատանքների⁴¹:

Նախարարների կաբինետի անդամների 1919թ. հուլիսի 5-ի դատավճիռը մեծ հետաքրքրություն է ներկայացնում նաև այն իմաստով, որ մեղադրյալները, ի

³⁷ Տես նույն տեղում, էջ 19:

³⁸ Տես նույն տեղում, էջ 119:

³⁹ Տես նույն տեղում, էջ 120:

⁴⁰ Նույն տեղում, էջ 126:

⁴¹ Տես Դադրիան Բ. Обзор материалов турецкого военного трибунала по обвинению в геноциде армян, с. 45:

թիվս այլ հանցագործությունների, մեղավոր էին ճանաչվում նաև Ռուսաստանի հետ պատերազմ սանձազերծելու և այդ նպատակով «Հատուկ կազմակերպություն» ստեղծելու մեջ, որը հանձնարարություն էր ստացել սադրիչ գործողություններ կատարել կովկասյան ժողովուրդների շրջանում՝ նրանց հրահրելով Ռուսաստանի դեմ ապստամբություն բարձրացնելու⁴²: Հենց այս համատեքստում պետք է դիտել նաև 1914թ. ամռանը Էրզրումում ՀՅԴ 8-րդ Ընդհանուր ժողովին երիտթուրքերի ներկայացրած այն համառ պահանջները, որ հայերը նույնպես միանան Կովկասի մահմեդականներին ու վրացիներին և ապստամբություն բարձրացնեն՝ երկրամասը Ռուսաստանից անջատելու նպատակով: Այս պահանջները ուղիղ կապ ունեն Հայոց ցեղասպանության հարցի հետ, քանզի փաստում են երիտթուրքերի կողմից հայերի տեղահանության՝ իբրև «պաշտպանական գործողության», ողջ կեղծավորությունը⁴³: Ռուսաստանի դեմ ագրեսիվ պատերազմ սկսելու մեղադրանքը ևս պերճախոս վկայությունն է այն բանի, որ միայն պետական իշխանություն ներկայացնող ուժը, որպիսին հանդիսանում էր երիտթուրքական կուսակցությունը, կարող էր թուրքական պետության անունից պատերազմ հայտարարել այլ երկրի, տվյալ դեպքում՝ Ռուսաստանին, ինչու և նրանց մեղավոր էր ճանաչում դատական ատյանը:

Թուրքական ռազմական դատարանի դատավճիռը վերջնական ուժի մեջ է մտել 1919թ. հուլիսի 13-ին՝ Օսմանյան կայսրության սուլթան Վահեդդինի կողմից այն վավերացնելուց հետո⁴⁴:

Փաստորեն երիտթուրք պարագլուխների դատավարությունը վեր էր ածվել լավ բեմականացված ներկայացման, քանզի նրա նպատակն էր հանգստացնել համաշխարհային հանրությանը, որն արդեն քաջատեղյակ էր հայերի զանգվածային սպանությունների մասին ու հետևում էր զարգացող իրադարձություններին և, բացի այդ, ցույց տալ հաղթանակած Անտանտի տերություններին, որ «նոր Թուրքիան» պատժում է պատերազմական հանցագործներին:

Ուրեմն իրականությանը ամենևին էլ չի համապատասխանում թուրքական այն պնդումը, թե երիտթուրքերի դատավարությունը Թուրքիան կազմակերպեց Անտանտի կամ Անգլիայի ճնշման տակ, որի գորքերը գտնվում էին Կոստանդնուպոլսում: Բացի այդ, երիտթուրք պարագլուխների դատավարությունը թուրքական պատմագրությունը ներկայացնում է նաև իբրև իթթիհատականների և իթիլաֆականների միջև զոյություն ունեցող միջկուսակցական ռիսակալության արդյունք⁴⁵:

Բազմաթիվ պատմական փաստերը ի հայտ են բերում թուրքական պատմագրության նաև այս տեսակետի բացարձակապես կեղծ լինելը: Սակայն առավել հրեշավոր է «թուրք հետազոտողների» այն պնդումը, թե իբր՝ նման արտաքին ճնշման ազդեցությամբ երիտթուրքերի դատավարությունը վեր էր ածվել վերջիններիս նկատմամբ քաղաքական հետապնդման: Մինչդեռ հատուկեմտ մարդիկ կատարված ծանր հանցագործությունների համար հատուցեցին իրենց կյանքով:

⁴² Տե՛ս նույն տեղում, էջ 43:

⁴³ Տե՛ս Барсегов Ю. Г. Турецкая доктрина международного права на службе политики геноцида, с. 41.

⁴⁴ Տե՛ս Հայերի ցեղասպանությունը ըստ երիտթուրքերի դատավարության փաստաթղթերի, էջ 191:

⁴⁵ Տե՛ս նույն տեղում, էջ 26:

Իրականությունն այն էր, որ Թուրքիան ձեռնարկեց այդ դատավարությունը՝ բացառապես ելնելով այն նպատակից, որ խուսափի միջազգային ռազմական դատարանից, որը նախատեսվում էր ստեղծել՝ Օսմանյան կայսրությունում պատերազմի ընթացքում կատարված զանգվածային հանցագործությունների հետ կապված: Այսպիսով՝ Թուրքիան կանխարգելում էր միջազգային ռազմական դատարանի ստեղծումը, որի ընթացքում կբացահայտվեին ոչ միայն կոնկրետ անձանց, այլև թուրքական պետության մեղավորությունը և պատասխանատվությունը, դրանից բխող միջազգային իրավական հետևանքներով՝ նոր Թուրքիայի համար: Համաձայնելով դատել թուրք բարձրաստիճան պաշտոնյաներին թուրքական դատարանում, թուրքերը կարող էին ավելի մեղմ վճիռների հույս ունենալ, սակայն գլխավոր պատճառն այն էր, որ կառավարությունը մտադիր էր այդ կերպ պատասխանատվությունից ազատել թուրքական պետությանը՝ պատասխանատվությունը միայն կառավարող կուսակցության և կառավարության ներկայացուցիչների վրա բարդելով⁴⁶:

Այդուհանդերձ, պետք է նշել, որ թե՛ մեղադրական եզրակացության և թե՛ թուրքական ռազմական դատարանի վճռի մեջ նկատվում են բազում նմանություններ մացիստական հանցագործներին դատապարտած Նյուրնբերգյան դատավարության հետ, ինչը խոսում է այս երկու դատավարություններով նույն հանցագործությունը՝ ցեղասպանությունը, դատապարտելու մասին: Տարբերությունն այն էր, որ երկրորդը միջազգային դատական ատյան էր և հետևաբար ավելի օբյեկտիվ ու հետևողական էր մեղավորներին պատժելու առումով, իսկ թուրքական ռազմական դատարանը ավելի շատ՝ ցուցադրական էր և ուղղված էր Թուրքիայի հեղինակությունը փրկելուն՝ ոմանց քավության նոխսագ դարձնելով և թուրքական պետությունը պատասխանատվությունից հեռացնելով:

Փաստորեն, թուրքական նոր կառավարությունը, գիտակցելով երիտթուրքական կառավարության կողմից կատարված հանցագործությունների իրավական ու քաղաքական հետևանքների ողջ ծանրությունը և, հասկանալով, որ թուրքերի կոլեկտիվ պատասխանատվությունը, որը դրսևորվելու էր թուրքական պետության քաղաքական պատասխանատվությամբ, հանգեցնելու է նրանց գոհի՝ հայ բնակչության նկատմամբ Օսմանյան կայսրության տարածքներում, ավելի ստույգ՝ Արևմտյան Հայաստանում, թուրքական իշխանության դադարեցմանը, առերևույթ որդեգրեց նախկին երիտթուրքական կառավարության գործողություններից սահմանազատվելու քաղաքականություն: Դրանից ելնելով, Թուրքիայի նոր իշխանությունները պատրաստակամություն էին հայտնում ճանաչել նախկին երիտթուրքական կառավարության մեղավորությունը միայն այն տեսքով և այն չափով, որոնք անհրաժեշտ էին տեղի ունեցած հանցագործությունների դատապարտման պատրանք ստեղծելու, թուրքական պետությունը պատասխանատվությունից փրկելու, բայց միևնույն ժամանակ այդ հանցագործության հետևանքներին՝ հայերի ունեցվածքին ու պատմական հայրենիքին տեր դառնալու համար⁴⁷:

⁴⁶ Տե՛ս Барсегов Ю. Г. Турецкая доктрина международного права на службе политики геноцида, с. 37.

⁴⁷ Տե՛ս նույն տեղում, էջ 38:

Այդ նպատակով նոր թուրքական կառավարությունը, սկսելով դատավարությունները, միևնույն ժամանակ միջոցներ ձեռնարկեց հանցագործության ծավալները փոքրացնելու, նրա բնույթը բաքցնելու համար և մյուս կողմից ամեն ինչ արեց, որպեսզի կայացված դատավճիռները (հատկապես մահվան) ի կատար չածվեն և մնան թղթի վրա⁴⁸: Չնայած այն բանին, որ հաստատված հանցակազմերը լիովին համընկնում էին և ճանաչվում էր մեղադրյալների մեղքը կոնկրետ հանցագործություններում, կայացված դատավճիռները և պատժաչափերը չէին համապատասխանում կատարվածին: Բարձրագույն պատժաչափը՝ մահապատիժը, որպես կանոն, կայացվում էր հեռակա կարգով, քանզի տվյալ հանցագործներն արդեն բացակայում էին երկրից: Այդ մասին է վկայում նաև Ստամբուլում բրիտանական գերագույն կոմիսարի պարտականությունները կատարող կոնտրծովակալ Վերրը, որը նշում էր, որ դատավճիռները ներկա և բացակա դատապարտյալների նկատմամբ կայացվում էին այնպես, որ նրանց կյանքից զրկելու իրական հնարավորությունը հասցվի նվազագույնի⁴⁹:

Դատավորները չցուցաբերեցին անհրաժեշտ հետևողականություն դատավճիռների հարցում: Նրանցից շատերը, կապված լինելով երիտթուրքերի հետ, հաճախ հակված էին չխորանալ կատարված փաստերի մեջ և չկայացնել խիստ որոշումներ: Դատաքննության ընթացքում թույլ են տրվել լուրջ թերացումներ: Օրինակ՝ շրջանային պատասխանատու քարտուղարների դատավարությունը տեղի է ունեցել 1919թ. հունիսին, մինչդեռ դատավճիռը ձգձգվել է մինչև 1920 թ. հունվարը: Պատճառն այն էր, որ եթե հեռակա կարգով դատի տրված մեղադրյալների նկատմամբ մահվան դատավճիռ կայացնելը կատարվում էր բավականին արագ ու անկաշկանդ, ապա ներկա գտնվող հանցագործների հանդեպ պատիժ սահմանելու հարցում հանդես էր բերվում ավելորդ դանդաղկոտություն ու հանդուրժողականություն⁵⁰:

Հետաքրքիր գնահատականներ այս դատավարություններին տվեցին հենց իրենք՝ թուրքերը: Յոզդաթի գործի դատավարության ավարտից հետո երիտթուրքական կուսակցության տեղի քարտուղարը հայտարարեց, որ կայացված «վճիռը իրենից ներկայացնում է կառավարության և դատարանի ինքնասպանությունը, քանզի դա թուրք ցեղի դատավճիռն է»⁵¹: Անկարայում ստեղծված քեմալական կառավարության վարչապետը նույնպես գտնում էր, որ այդ վճիռը «սեփական կառավարության մեղքի ճանաչումն ու հավաստումն է»⁵²: Փաստորեն անգամ այս մեղմ վճիռները գնահատվում էին իբրև չափազանց խիստ երիտթուրքերի համար, և չնայած այն բանին, որ երիտթուրքերի՝ Հայոց ցեղասպանության հետ կապված շատ գործերի քննությունը արդեն ավարտված էր, և նրանք սպասում էին նոր դատավարությունների սկսվելուն, քեմալական իշխանությունները նախաձեռնեցին

⁴⁸ Տե՛ս նույն տեղում:

⁴⁹ Տե՛ս Барсегов Ю. Г. Турецкая доктрина международного права на службе политики геноцида, с. 42.

⁵⁰ Տե՛ս Հայերի ցեղասպանությունը ըստ երիտթուրքերի դատավարության փաստաթղթերի, էջ 25:

⁵¹ Барсегов Ю. Г. Турецкая доктрина международного права на службе политики геноцида, с. 44.

⁵² Նույն տեղում:

լրիվ հակառակ մի գործընթաց: 1921թ. հունվարի 3-ին նրանք որոշում կայացրին ռազմական դատարանները փոխարինել սեփական անկախության դատարանով մասնավորապես այն հանցագործությունների հետ կապված, որոնք լավել էին Անկարայի վիլայեթում՝ Յոզղաթում, իսկ 1922թ. ապրիլի 25-ին քեմալականները ստիպեցին վերջին կառավարության վերջին մեծ վեզիրին ռազմական դատարաններն ընդհանրապես հայտարարել ոչ իրավասու «ազգայնականներին», այսինքն՝ երիտթուրքերին, դատելու համար: Այս քայլերի վերջնակետը հանդիսացավ այն, որ 1923թ. մարտի 31-ին ընդհանուր համաներում հայտարարվեց բոլոր նրանց համար, ովքեր դատապարտվել էին ոչ միայն ռազմական, այլև քաղաքացիական դատարանների կողմից⁵³: Լուծարելով ռազմական դատարանները և կարճելով բոլոր քրեական գործերը, որոնք կապված էին հայերի տեղահանությունների և կոտորածների հետ, քեմալականները հենց իրենք հաստատեցին, որ հանդես են գալիս ոչ միայն որպես հանցագործների պաշտպաններ, այլև հանդիսանում են նրանց ցեղասպան քաղաքականության իրավահաջորդները:

Քեմալականների նման քայլերի հաջորդականության պատճառաբանությունն այն էր, որ նախ դատավարությունների շարունակությունը կարող էր բերել նոր բացահայտումների, որի հետևանքով ակնհայտ կդառնար քեմալականների կապը երիտթուրքերի հետ, քանզի շատ նախկին իթթիհատականներ արդեն դեկավարում էին քեմալական շարժումը և պատասխանատվությունը կարող էր տեղափոխվել նաև այդ նոր թուրքական շարժման վրա: Քեմալականների այս քայլերը միանշանակորեն վկայում էին, որ նրանք ոչ միայն մտադրված չեն դատապարտել նախորդ ռեժիմի քաղաքականությունը հայերի նկատմամբ, այլև լիովին կիսում ու պաշտպանում են այն, իսկ նրանց հետագա ներխուժումը և գործելակերպը արդեն՝ Արևելյան Հայաստանում, բացահայտորեն ապացուցեց երիտթուրքերի հետ ժառանգորդական կապը:

Սակայն չնայած թուրքական կառավարության և դատարանների ջանքերին՝ հեռու պահել պատասխանատվությունից թուրքական պետությանը, այնուամենայնիվ, դատավարությունների նյութերը օգնում են պարզել տեղի ունեցածի իրական պատկերը: Այն հանգամանքը, որ երիտթուրքերի հետ կապված՝ տարբեր գործերով ռազմական դատարանները հանգում էին միևնույն եզրակացությանը, խոսում էր այն մասին, որ կատարված հանցագործությունները մեկ ընդհանուր մեծ ոճրագործության շղթայի հանգույցներն էին:

Թուրքական արդարադատության բոլոր ակնհայտ թերություններով, բացթողումներով, կողմնապահությամբ ու արհեստական սխալներով հանդերձ, պետք է նշել, որ երիտթուրքերի դատավարությունը ունի չափազանց կարևոր նշանակություն Հայոց ցեղասպանության փաստի պատմաիրավական հիմնավորման և հետևանքների վերացման տեսանկյունից: Քանզի դա քաղաքական դատավարություն էր, որով թուրքական իշխանության բարձրաստիճան պաշտոնյաները մեղավոր էին ճանաչվում հայերի զանգվածային սպանությունների մեջ: Ամենայն վստահությամբ կարելի է տրոհել, որ նման մեղադրանքի հաստատումը թուրքական դասա-

⁵³ Տես նույն տեղում:

րանում նշանակում էր նոր Թուրքիայի կողմից Հայոց ցեղասպանության անուղղակի ճանաչում: Թեև սա էր նաև դասձառը, որ հեսագայում քննալականները փորձեցին չեզոքացնել ռազմական դասարանների վճիռները:

Այս տեսակետից կարծում ենք, որ ներկայումս զգացվում է թուրքական ռազմական դատարանների կայացրած վճիռները միջազգայնացնելու անհրաժեշտությունը, այսինքն՝ եղած նյութերի հիման վրա պետք է նախաձեռնվի այդ դատական գործի վերաբացումը և դատավճռի վերանայումը՝ արդեն միջազգային դատական ատյաններում: Մասնավորապես նման դատավարություն կարելի է նախաձեռնել նորաստեղծ Հռոմի միջազգային քրեական դասարանում այն հիմնավորմամբ, որ.

առաջին, պատերազմական հանցագործների դատավարությունը պետք է իրականացվեր ոչ թե թուրքական ազգային դատարանի, այլ ավելի անաչառ ու օբյեկտիվ՝ միջազգային դատական ատյանի կողմից, իսկ թուրքերը ամեն ինչ արեցին, որ ձախողեն Ազգերի Լիգայի կողմից նախաձեռնվող միջազգային տրիբունալում երիտթուրքերի հնարավոր դատավարությունը

երկրորդ, թուրքական ռազմական դատարանի դատավարության նյութերից հստակ երևում է, որ երիտթուրքերի կատարած հանցագործությունները եղել են թուրքական պետության և իշխանության հստակ ծրագրած քաղաքականությունը, որի համար պետք է պատասխանատվություն կրեին ոչ միայն կոնկրետ անձինք, այլև թուրքական պետությունը, սակայն դատավճռում անգամ ակնարկ չկար թուրքական պետության մեղավորության մասին,

երրորդ, դատավճռում հայերի զանգվածային կոտորածների մեղադրանքը, որը միջազգային իրավական նորմերով միանշանակ որակվում է իբրև ցեղասպանություն, մղվել է հետին պլան, և երիտթուրքերին հիմնականում դատապարտել են այլ հանցագործությունների համար և այլ մեղադրանքներով, չնայած դատավարության նյութերի մեջ առատ փաստեր կային հայերի զանգվածային սպանությունների մասին:

Կարծում ենք՝ հայ իրավաբանները, պատմաբանների հետ միասին, լուրջ պարտավորություն և անելիքներ ունեն Հռոմի միջազգային քրեական դատարանում տվյալ գործընթացը նախաձեռնելու և Հայ Դատի արդարացի ու վերջնական լուծմանը հասնելու առումով:

Summary

HISTORIC-LEGAL CONSEQUENCES OF THE TRIAL OF YOUNG TURKS:

in the context of the international recognition of the Armenian Genocide

Armen Ts. Marukyan

Despite all obvious deficiencies onesidedness and artificial mistakes committed at the trial of the Young Turks by the Turkish justice, it has had not only historic, but also very important legal and political significance for the historic-legal substantiation of the fact of the Armenian Genocide. The Turkish Military tribunal found guilty the high officials also in the mass killings of Armenians. The proof of such a charge in the Turkish court meant indirect recognition of the Armenian Genocide by modern Turkey. Later, probably, as a result of it, the Kemalists tried to neutralize the decisions of the Military tribunals. From this point of view, it seems that at the present there is a need to internationalize the decisions of the Military tribunals, i.e. it is necessary to undertake the investigation of that lawsuit on the basis of available documents in the International court with a new condemnation against the Turkish state-that it has been guilty in committing the Armenian Genocide.